

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

I

Ե Կ Ա Տ Ե Ր Ի Ն Ո Ղ Ա Ր Ի Յ

1894 թ., 14 ապրիլի:

Ով որ մօտաւորապէս մի տասը տարի առաջ տեսել է Նկատերինո-
ղար քաղաքը և նորից տեսնելու լինի, մեծ փոփոխութիւն պէտք է գտնի.
անպատճառ կը նկատի, որ քաղաքը մեծ քաղեր է արեւ դէպի լաւը,
դէպի առաջդիմութիւնը թէ ուսումնական, թէ առևտրական և թէ կա-
ռուցւած հոյակապ հիմնարկութիւնների վերաբերութեամբ: Ապագային
թողնելով վերոյիշեալների մասին մեծաւոր «Մուրճ»-ի ընթերցողնե-
րին ծանօթացնելը, առ ալժմս գրում եմ քանի մի դէպքերի մասին,
որոնք տեղի ունեցան մօտաւոր անցեալում տեղիս հաւ փոքրաթիւ հաս-
րակութեան շրջանում: Ներկայ թւականին վերջացաւ հին հոգաբարձու-
ների պաշտօնավարութեան շրջանը. աչս պատճառով ընդհանուր ժողով
կալացաւ, որտեղ ընտրւեցին, հինների փոխանակ, ձալների մեծամասնու-
թեամբ պ. պ. Պ. Պետրոսեան ու Ա. Մամիկոնեան (վաճառականներ). իսկ
անձնափոխանորդներ—Կ. Քէլէճեան և Մ. Սրմաքչեան: Աչս ժողովին
ներկայ էին 85 հոգի: Ամսիս 10-ին մի ալ ժողով կալացաւ տեղիս ծխա-
կան ուսումնարանի դահլիճում նոր երեցփոխան ընտրելու նպատակով:
Աչս ժողովը առաւել բազմամարդ էր, ներկայ էին 182 հոգի. նոր երեց-
փոխան ընտրւեց վաճառական պ. Սարգիս Խարազիլէեանը 107 ձալով:
Իմ կարծիքով ընտրութիւնը շատ աջող է, որովհետեւ հասարակութեան
մէջ պատւաւոր դիրք ունի, վերին աստիճանի ընթերցասէր է, օգտակար
նորութիւններին հետևող և լաւ գործերի խրախուսող և քաջալերող անձ-
նաւորութիւն է: Հասարակութիւնը համոզւած է, որ նոր երեցփոխանը
կալխատի եկեղեցու վերանորոգման գործը շուտով վերջացնել և սրա օրով
տեղի հեն ունենալ սովորական անկարգութիւնները, որոնց մասին աւելի
լաւ եմ համարում լռել:

Նոր երեցփոխի համար հաշվետեսներ ընտրեցին պ. պ. Ար. Շապու-
վալեան, Պե. Սալադճեան և Մ. Քաթենիքեան, որոնք նույնպէս պատա-
ւոր վաճառականներ և եռանդուն մարդիկ են:

Մօտ ժամանակներումս ալստեղ բացեց մի գրադարան-ընթերցա-
րան, որ բաւականին հարուստ է լաւ լաւ գրքերով, ստացում են Թիֆ-
լիսից երկու օրագիրներ և մտադիր են ստանալ «Մուրճ» ամսագիրը: Լուր
է տարածել, որ տեղիս հայերը ցանկանում են Կովկ. հալոց Բար. ընկե-
րութեան ճիւղ ունենալ ալստեղ: Մօտ ժամանակներում կունենանք հե-
ռախօս (տելեֆոն), ելեքտրական լուսաւորութիւն և ջրանցք: Կաշխատեմ
ալսուհետեւ շարունակաբար տեղեկութիւններ տալ ալստեղի ղէպերի մա-
սին պատական «Մուրճ»-ի ընթերցողներին:

Թ.

P. S. Ալստեղ էլ երբեմն երևում են մեծ ապատիւ մուրաց-
կաններ, որոնք հասարակութեանը զգեստներուց չետոյ հեռանում են,
թողնելով իրանց փոխանորդներ՝ սկսած գործը շարունակելու: Մի օրինակ.
չունւարի 14-ին մի պարոնի անւանակոչութեան տօնն էր, որտեղ բաւա-
կանին մեծ թուով հիւրեր կալին. սրանցից մէկը ներկա էր զողներից, առանց
բացառութեան, երեքական ռուբլի հաւաքեց, չգիտենք ի՞նչ նպատակով.
երբ նրանից հարցնում էին թէ ի՞նչ բանի համար է, պարոնը պատասխա-
նում էր թէ «վերջը կիմանաք»: Մինչև այժմ մեզ չալտնի չէ թէ ի՞նչ եղաւ
մեր աւած փողերը, որ մօտ 60 ռուբլի կը լինի:

Թ.

II

ՆՍՏԵՆԹՈՒԿԻ ՀԱՆՔԱՅԻՆ ՋՐԵՐԸ

(Մենք ստացանք Մոսկուայից, բժիշկ Մ. Ջերնովից հետեւալ նամակը,
գրած ռուսերէն, որի թարգմանութիւնը ահայ):

Մեծարգոյ պ. Խմբագիր. Թոյլ տւէք չուսալ, որ Դուք չէք զլանալ
Ջեր համակրութիւնը և պաշտպանութիւնը Նստենթուկի հասարակաց ձեռ-
նարկութիւններին և չէք թողնիլ մեր ընթերցարանը առանց Ջեր չար-
գելի հրատարակութեան լընթացս ամառաւ ամիսների 15-ից մալիսի մինչ
մէկն օգոստոսի:

Նստենթուկի հասարակաց հաստատութիւնները դեռ ևս չեն հասել
աչն նիւթական անկախութեան, որով նորա կարող լինէին ապրիլ առանց
բարի և դէպի նոցա լաւ տրամադրած անձերի օգնութեան. Մագած լի-
նելով 1891 թ., մի բժշկի նախաձեռնութեամբ, կամաւոր նւիրաբերու-